ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 176-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Որոշում եմ.

1.Հաստատել Թումանյանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.
1) Հանձնաժողովի նախագահ՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան-Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
2) Հանձնաժողովի անդամ՝ Գնել Գագիկի Քոչարյան –Թումանյան համայնքի ղեկավարի օգնական,
3) ----//---- Գառնիկ Անդրանիկի Հովսեփյան - Դսեղ բնակավայրի վարչական ղեկավար,
4) ----//---- Լյուդմիլա Սարիբեկի Հովսեփյան -ավագանու անդամ,
5) ----//---- Մարիամ Սարգսի Էհտիբարյան - Դսեղի առողջության կենտրոնի տնօրեն,
6) ----//---- Ստեփան Արտեմի Վարոսյան - Թումանյանի առողջության կենտրոնի,
7) --//---- Էդուարդ Ռազմիկի Շեկոյան - Դսեղի միջնակարգ դպրոցի տնօրեն,
8) -----//----Դավիթ Դանուշի Շահվերդյան – ՈԼՄՎ ԹԲԱԳ և ԸԲԿԲ տեսուչ,
9) ----//---- Նանե Լևոնի Էվոյան - Առաջատար մասնագետ:
2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 22-ի <<Թումանյան համայնք խնամակալության և հոգաբարջության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> N 41-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 01
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 177-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՆՈՒՀԻ ՍՄԲԱՏԻ ԲԱԴՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 06-035-104-023-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0,1068 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ <<ՌԱՖԹԻՆԳ>> ՍՊԸ-Ի ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՎԱՆԴ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով ՀՀ հողային օրենսգրքի 85-րդ հոդվածով,հիմք ընդունելով ,,Ռաֆթինգ,, ՍՊԸ-ի 12.01.2022թ, հաստատված կանոնադրությունը,Դսեղի գյուղապետարանի և Վանուհի Բադոյանի միջև կնքված 05.05.2010թ. վարձակալության պայմանագիրը,Վանուհի Բադոյանի 16.05.2022թ.թիվ 322 դիմումը,հաշվի առնելով Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 07-ի 55-Ա որոշումը, Ռաֆթինգ,, ՍՊԸ-ի ներդրումներ կատարելու պատրաստակամությունը, ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանիներին ներկայացված և հավանության արժանացած ներդրումային փաթեթը և Ռաֆթինգի դպրոց բացելու հեռանկարային պլանները՝

Որոշում եմ.

Թույլատրել Վանուհի Բադոյանին վարձակալության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում գտնվող 06-035-104-023-001 կադաստրային ծածկագրի 0,1068 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքը ,,Ռաֆթինգ,, ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներդնել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. հուլիսի 04
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 178-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,հիմք ընդունելով Դսեղ գյուղի բնակիչ Արտաշես Աշոտի Թումանյանի /մուտք՝ 27.06.2022թ. թիվ 425/դիմումը, Կադաստրի կոմիտեի <<Հաշվառման /Չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանք>>տրված 19.01.2022թ. և համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Դսեղ գյուղի բնակիչ Արտաշես Աշոտի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ համայնք Թումանյան գյուղ Դսեղ 06-035-0020-0017 կադաստրային ծածկագրի 0,1414հա մակերեսով հողամասի և հողամասում 1968 թվականին կառուցված 59.60քմ մակերեսով բնակելի տան պատերի, 37,20քմ մակերեսով մառանի,45,80քմ մակերեսով անասնաշենքի և 1999թ. կառուցված 0,90քմ մակերեսով սանհանգույցին տրամադրել նոր փոստային՝ <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Դսեղ,փողոց 17,թիվ 11 բնակելի տուն>> հասցեն:

2. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 6-ի <<Փոստային հասցե տրամադրելու մասին>> N 142-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. հուլիսի 6
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 179-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2022թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 8-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ների հայտերը՝ Որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.

1/Հախվերդյան Հովակիմ-ք.Թումանյան 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/ Գրիգորյան Սուսան -ք. Թումանյան 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
3/ Սարգսյան Հայկուշ -ք. Թումանյան 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/ Չերչինյան Սեդրակ -ք.Թումանյան 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
5/ Սարգսյան Գայանե -ք.Թումանյան 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
6/ Մաթևոսյան Սուսաննա - գ.Ահնիձոր 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
7/Մուրադյան Թինա -գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
8/ Սագսյան Լուսինե-գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,,
9/Ղուլինյան Գոհար -գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
10/Գոգինյան Արա -գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
11/Զաքարյան Գայանե -գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
12/Պողոսյան Էլլա-գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
13/Ներսիսյան Արծրուն -գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
14/Հախվերդյան Արարատ -գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
15/Բեգլարյան Սոֆյա -գ.Դսեղ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
16/ Սահակյան Անահիտ - գ.Լորուտ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած

ժամանակահատվածի համար,
17/ Զուրաբյան Լուսինե - գ.Լորուտ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
18/ Ղազարյան Հրանուշ -գ. Մարց 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
19/ Սարգսյան Մանուշակ -գ. Մարց 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
20/Վանյան Լաուրա-գ.Քարինջ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
21/Քոչարյան Նաիրա -գ.Քարինջ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
22/Մխիթարյան Մխիթար -գ.Քարինջ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 6
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 180-Ա

<< ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՄԼԵՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

Որոշում եմ.

1. <<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Համլետ Քոչարյանին ս/թ հուլիսի 11-ից ազատել զբաղեցված պաշտոնից և լուծված համարել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 22թ. հուլիսի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 181-Ա

ՄԱՌ ԿԱՐԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ <<ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետը՝
Որոշում եմ.

1.Մառ Կարենի Քոչարյանին ս/թ հուլիսի 11-ից թիվ 37 07.07.2022 թվականի ժամկետային աշխատանքային պայմանագրի համաձայն ընդունել աշխատանքի, որպես <<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:
2.<<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի գույքի հանձնում-ընդունման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
1/.Հանձնաժողովի նախագահ՝ Ռոման Շաքարյան /Համայնքի ղեկավարի տեղակալ/,
2/-------//------անդամ՝ Արմիկ Մուրադյան /Գլխավոր մասնագետ-հաշվապահ/,
3/-------//------անդամ՝ Արման Մոսինյան /Համայնքի ղեկավարի օգնական/,
4/-------//------անդամ՝ Անուշ Ամիրջանյան /Առաջին կարգի մասնագետ/,
5/-------//------անդամ՝ Անգին Ծատինյան /ՀՈԱԿ-ի հաշվապահ/,
6/հանձնող՝ Համլետ Քոչարան <<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ,
7/ընդունող՝ Մառ Քոչարյան <<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն ժ/պ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 22թ. հուլիսի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 182-Ա

ՎԱՆՈՒՀԻ ԲԱԴՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության,տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 14.06.2022թ. N ՔՏՄ /19.10/8749-22 գրության պահանջները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 26-րդ ենթակետով՝

Որոշում եմ

1. Վանուհի Բադոյանին Հայաստանի Հանրապետության Վարչական օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետի հատկանիշներով ենթարկել պատասխանատվության՝ տուգանքի ձևով 600000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Վանուհի Բադոյանին օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում Թումանյանի համայնքապետարանի 900265002528 հաշվեհամարին մուծել տուգանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 183-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով , Մարց գյուղի բնակիչ Հայկ Արամայիսի Հովհաննիսյանի դիմումը, հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N 1789647 տրված 25.04.2003 թ. և համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Հանգուցյալ Արամայիս Հարությունի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ Մարց համայնք բնակելի տանը (ծած.06-071-025-000022-001) մակերեսի չափը՝ 111,21 քմ և բնակելի կառուցապատման հողամասին,մակերեսի չափը՝ 0,257 հա տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Մարց, 2-րդ փողոց,15/1 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. հուլիսի 07
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 184-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՊԱՏԵՐԻ,ՄԱՌԱՆԻ,ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ,ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, 10.06.2008թ. <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ բնակելի տունը,դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, իսկ առկա բնակելի տան պատերը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի /06.08.2021թ. գործ թիվ ԼԴ2/0699/02/21/ վճիռը , <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ն կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը և Դսեղ գյուղի բնակիչ Արտաշես Աշոտի Թումանյանի /մուտք՝ 27.06.2022թ. թիվ 425 /դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Արտաշես Աշոտի Թումանյանի /ծնված.28.08.1968թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 17 փողոց, թիվ 11 հասցեում գտնվող 06-035-0020-0017 ծածկագրի 0,1414 հա հողամասի և հողամասում 1968 թվականին կառուցված 59.60քմ մակերեսով բնակելի տան պատերի, 37.20 քմ մակերեսով մառանի, 45,80քմ մակերեսով անասնաշենքի և 1999թ. կառուցված 0,90քմ մակերեսով սանհանգույցի նկատմամբ՝ որպես օրինական գույք:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:
4. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. հուլիսի 07
ք.Թումանյան